



ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

30 դեկտեմբերի 2021 թվականի թիվ 205-Ս

ք. Երևան

«ՀԻՔՐԻԴ ՓՐՈԴԱՔՇՆ ԷՆԴ ԴԻՍԹՐԻԲՅՈՒՇՆ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՍԲ ՀԱՐՈՒՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովն (այսուհետ՝ Հանձնաժողով) ուսումնասիրելով դիմումի հիման վրա 2021 թվականի նոյեմբերի 03-ին հարուցված թիվ 14 վարչական վարույթի նյութերը՝ *պարզեց*.

2021 թվականի նոյեմբերի 03-ին Հանձնաժողով մուտքագրված «ՎԻ ԷՍ ՏԵԼԵՊՐՈՋԵՔԹ» ՍՊ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) դիմումում նշված է հեղինակագործված «ՀԻՔՐԻԴ ՓՐՈԴԱՔՇՆ ԷՆԴ ԴԻՍԹՐԻԲՅՈՒՇՆ» ՍՊ ընկերության (այսուհետ՝ Հեռարձակող) կողմից ոչ սեփական տեսալսողական հաղորդումներն առանց դրանց հեռարձակման իրավունքը հավաստող փաստաթղթերի հեռարձակելու փաստի վերաբերյալ:

Ըստ Ընկերության՝ Հեռարձակողի կողմից «Հիբրիդ Ֆիլմ» տեսալսողական ծրագրով հեռարձակվել են Գ/Ֆ Война Богов: Бессмертные (24.10.2021., ժամը՝ 21:09), Գ/Ֆ Призрачный мир (27.10.2021., ժամը՝ 19:05), Գ/Ֆ Джой (27.10.2021., ժամը՝ 17:05), Գ/Ֆ Белль и Себастьян: Друзья навек (27.10.2021., ժամը՝ 15:35), Գ/Ֆ Дом грез (27.10.2021., ժամը՝ 14:05), Գ/Ֆ Белль и Себастьян: Приключения продолжается (27.10.2021., ժամը՝ 12:30), Հ/Ս Агенты «Ш.И.Т.» (27.10.2021., ժամը՝ 11:45), Մ/Ս Трое с небес истории аркадии (27.10.2021., ժամը՝ 11:20), Հ/Ս Два с половиной человека (27.10.2021., ժամը՝ 10:55) ֆիլմերը, իսկ «Հիբրիդ Ռեստ» տեսալսողական ծրագրով՝ «Նորածնություն» (24.10.2021., ժամը՝ 21:10) և «Շքեղ կյանք» (27.10.2021թ., ժամը՝ 22:28) տեսալսողական հաղորդումները:

Հանձնաժողովը ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի ա) կետով և հիմք ընդունելով Ընկերության դիմումը՝ 2021 թվականի նոյեմբերի 03-ին Հեռարձակողի նկատմամբ հարուցել է վարչական վարույթ:

Հանձնաժողովը հարուցված վարչական վարույթի մասին 2021 թվականի նոյեմբերի 05-ին ծանուցել է Հեռարձակողին և հայտնել, որ այս հարցի վերաբերյալ կարող են ներկայացնել իրենց պարզաբանումները և բացատրությունները:

Հարուցված վարչական վարույթի ընթացքում Հեռարձակողը 2021 թվականի նոյեմբերի 30-ին Հանձնաժողով գրավոր բացատրություն է ներկայացրել այն մասին,

որ նշված տեսալսողական հաղորդումները և ֆիլմերը հեռարձակվել են իրավատիրոջ հետ կնքված պայմանագրի հիման վրա: Հեռարձակողը Հանձնաժողով է ներկայացրել նշված տեսալսողական հաղորդումների և ֆիլմերի իրավատեր հանդիսացող «ՄԱԿՐՈՄԵԴԻԱ» ՍՊ ընկերության (ООО «МакроМедиа») և «ՀԻԲՐԻԴ ՓՐՈԴԱՔՇՆ ԷՆԴ ԴԻՍԹՐԻԲՅՈՒՇՆ» ՍՊ ընկերության միջև 2021 թվականի հունվարի 01-ին կնքված պայմանագրի պատճենը:

Հարուցված վարչական վարույթի ընթացքում Ընկերությունը 2021 թվականի նոյեմբերի 10-ին Հանձնաժողով հասցեագրված գրությամբ հայտնել է այն մասին, որ չի հանդիսանում դիմումում նշված ֆիլմերի և տեսալսողական հաղորդումների իրավատերը և դիմում ներկայացնելը պայմանավորված է եղել ոչ թե որպես իրավատիրոջ իրավունքների խախտման հանգամանքով, այլ ընդհանրապես, տեսալսողական մեդիայի ոլորտը կարգավորող իրավական պահանջների հնարավոր խախտմամբ:

Ընկերությունը Հանձնաժողով հասցեագրված գրությամբ նշել է նաև, որ որպես դիստրիբյուտոր գործունեություն ծավալելով տեսալսողական մեդիայի ոլորտում, այն կարգավորող որևէ օրենսդրական պահանջի խախտումն ուղղակիորեն կարող է ազդել դիստրիբյուտորի իրավունքների և օրինական շահերի վրա, մասնավորապես, ինչպես դիմումում է նշվել օրենսդրական պահանջի որևէ խախտմամբ տվյալ ոլորտում գործունեություն իրականացնելը կարող է հանգեցնել ոչ միայն անբարեխիղճ մրցակցության այլ տնտեսվարող սուբյեկտների նկատմամբ, այլ կարող է առաջացնել նաև նյութական վնասներ այն դեպքերում, երբ իրավախախտում թույլ տվող սուբյեկտը հրաժարվում է օրինական ճանապարհով օգտվել համապատասխան ծառայություններ առաջարկող տնտեսվարող սուբյեկտի ծառայություններից և տեսալսողական հաղորդումներ և ֆիլմեր վերահաղորդում է ոչ իրավաչափ ճանապարհով:

Հանձնաժողովի հիմնավորումները (պատճառաբանությունը) և եզրահանգումը.

Այսպիսով, վարչական վարույթի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության, ձեռք բերված ապացույցների ուսումնասիրության և գնահատման արդյունքում Հանձնաժողովն ամրագրում է հետևյալը.

«Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 10-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ոչ սեփական տեսալսողական հաղորդումները կարող են հեռարձակվել միայն դրանց հեռարձակման իրավունքը հավաստող փաստաթղթերի առկայության դեպքում:

Փաստում ենք, որ Հանձնաժողովի 2020 թվականի սեպտեմբերի 18-ի թիվ 112-Ս որոշմամբ «ՀԻԲՐԻԴ ՓՐՈԴԱՔՇՆ ԷՆԴ ԴԻՍԹՐԻԲՅՈՒՇՆ» ՍՊ ընկերությունը հեղինակագործվել է (ՀՎ N 023) և վերջինիս տրվել է տեսալսողական մեդիածառայություն մատուցողի կարգավիճակ:

Այսպիսով, վարչական վարույթի նյութերի ուսումնասիրության և համադրման արդյունքում Հանձնաժողովն ամրագրում է, որ Օրենքով Հեռարձակողների համար պարտավորություն է սահմանված՝ ոչ սեփական տեսալսողական հաղորդումները

հեռարձակել միայն դրանց հեռարձակման իրավունքը հավաստող փաստաթղթերի առկայության դեպքում: Վարչական վարույթի շրջանակներում Հեռարձակողը Հանձնաժողով ներկայացրել է խնդրո առարկա հանդիսացող ֆիլմերի և տեսալսողական հաղորդումների հեռարձակման իրավունքը հավաստող փաստաթղթերը (պայմանագիր):

Հանձնաժողովի կողմից վարչական վարույթի ընթացքում ձեռք բերված և ներկայացրած ապացույցների ուսումնասիրության արդյունքում հայտնի է դարձել, որ Հեռարձակողի կողմից Ընկերության դիմումում նշված տեսալսողական հաղորդումները և ֆիլմերը հեռարձակվել են իրավաստիրոջ հետ կնքված պայմանագրի հիման վրա և Հեռարձակողի կողմից պահպանվել է Օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված դրույթի պահանջը:

Հանձնաժողովի կողմից ուսումնասիրվել են վարչական վարույթի մասնակիցների կողմից ներկայացրած փաստերը, որոնք համադրվել են վարչական վարույթի շրջանակներում ձեռք բերված ապացույցների հետ և «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի խախտում չի հայտնաբերվել:

Այսպիսով, հաշվի առնելով այն փաստը, որ Հեռարձակողի և խնդրո առարկա հանդիսացող տեսալսողական հաղորդումների և ֆիլմերի իրավաստիրոջ միջև 2021 թվականի հունվարի 01-ին կնքվել է պայմանագիր և խնդրո առարկա հանդիսացող ֆիլմերը և տեսալսողական հաղորդումները հեռարձակվել են դրանց հեռարձակման իրավունքը հավաստող փաստաթղթերի առկայության դեպքում, ուստի վարչական վարույթի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության, ձեռք բերված ապացույցների ուսումնասիրության և գնահատման արդյունքում Հանձնաժողովն արձանագրում է, որ վարչական իրավախախտման դեպքի կամ կազմի բացակայության հիմքով Հեռարձակողի նկատմամբ հարուցված թիվ 14 վարչական վարույթը ենթակա է կարճման:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 247-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված է՝ վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը չի կարող սկսվել, իսկ սկսվածը ենթակա է կարճման հետևյալ հանգամանքների առկայության դեպքում՝

1) վարչական իրավախախտման դեպքի կամ կազմի բացակայությունը:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 282-րդ հոդվածի համաձայն՝ քննելով վարչական իրավախախտման վերաբերյալ գործը, մարմինը (պաշտոնատար անձը) ընդունում է հետևյալ որոշումներից մեկը՝

1) վարչական տույժ նշանակելու մասին.

2) գործի վարույթը կարճելու մասին:

Գործի վարույթը կարճելու մասին որոշում ընդունվում է բանավոր դիտողություն հայտարարելու, նյութերը ընկերական դատարանի, ձեռնարկությունում, հիմնարկում, կազմակերպությունում և դրանց կառուցվածքային ստորաբաժանումներում ստեղծված՝ հարբեցողության դեմ պայքարի հանձնաժողովի, հասարակական կազմակերպության կամ աշխատավորական կոլեկտիվի քննությանը հանձնելու կամ դատախազին, նախաքննության կամ հետաքննության մարմնին հանձնելու դեպքում, ինչպես նաև սույն օրենսգրքի 247 հոդվածով նախատեսված հանգամանքների առկայության դեպքում:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 247-րդ հոդվածի 1-ին կետի, 282-րդ հոդվածի դրույթները՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը **որոշեց**.

1. Կարճել «ՀԻԲՐԻԴ ՓՐՈԴԱՔՇՆ ԷՆԴ ԴԻՍԹՐԻԲՅՈՒՇՆ» ՍՊ ընկերության նկատմամբ հարուցված թիվ 14 վարչական վարույթը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն վարչական վարույթի մասնակիցներին պատշաճ ձևով հանձնելու օրվան հաջորդող օրվանից:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

**ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՑԻ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ**

Տ. ՀԱԿՈԲՅԱՆ

30 դեկտեմբերի 2021թ.
ք. Երևան